<<Էդիտ պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում։

Հաստատություն՝ <<Մասիսի թիվ 1 մսուր-մանկապարտեզ>>ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Սիմոնյան Նարինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երեւան 2022

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Թեմատիկ ինտեգրված ուսուցումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում----------4-7

3. Ինտեգրված պարապմունքները՝ որպես ուսուցման արդյունավետության միջոց----------8

4. Ինտեգրված պարապմունքի նմուշ-օրինակ----------9-12

5. Եզրակացություն----------13

6. Գրականության ցանկ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ինտեգրված ուսուցումը

Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Ինտեգրման գործընթացի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է:

Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառնորում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում: Վ.Վ. Կրաևսկու, Ա.Վ. Պետրովսկու, Ն.Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը: Գ. Դ. Գլեյզերը և Վ. Ս. Լեդնևը բացահայտում են կրթության բովանդակության ինտեգրման ուղիները: Լի Նովիկովայի և Վ.Կ. Կարոլովսկու ստեղծագործություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները:

Հայտնի է,որ կյանքում ամեն ինչ փոխկապակցված է,եւ ոչինչ մեկուսի չի կարող գոյություն ունենալ:Այնպես էլ երեխաներն աշխարհն ընկալում են որպես մեկ ամբթղջություն:Նրանք ակտիվ սովորողներ են,եւ ձգտում են ամբողջապես ճանաչել այն վայրը ,որտեղ ապրում են:Նրանք իրենց գիտելիքները,կարողություններն ու հմտությունները կառուցում են հասակակիցների,ծնողների եւ այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների,ինչպես նաեւ ֆիզիկական ու հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրության միջոցով:

Թեմատիկ ինտեգրված ուսուցումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Հայտնի է,որ կյանքում ամեն ինչ փոխկապակցված է,եւ ոչինչ մեկուսի չի կարող գոյություն ունենալ։Այնպես էլ երեխաներն աշխարհն ընկալում են որպես մեկ ամբթղջություն։Նրանք ակտիվ սովորողներ են,եւ ձգտում են ամբողջապես ճանաչել այն վայրը ,որտեղ ապրում են։Նրանք իրենց գիտելիքները,կարողություններն ու հմտությունները կառուցում են հասակակիցների,ծնողների եւ այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների,ինչպես նաեւ ֆիզիկական ու հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրության միջոցով։

Ինչպիսի՞ն են նախադպրոցական տարիքի երեխաները։Նրանք հետաքրքրասեր են,ունեն վառ երեւակայություն,հետաքրքիր աշխատանքից հաճույք են ստանում,սիրում են փորձություններ կատարել,խնդիրներ առաջադրել եւ լուծել դրանք։Բոլոր երեխաներն են օժտված են այդ հատկություններով։Սակայն շատերն իրենց կյանքի հենց առաջին տասնամյակում,ընտանիքի,մանկավարժների եւ միջավայրի հետ շփման արդյուքնում ,կորցնում են դրանք։Հետեւաբար,դաստիարակների խնդիրն է՝ապահովել .

1. Տարիքային զարգացման չափորոշիչներին համապատասխան գործունեություն։Այս պահանջը ենթադրում է հենվել երեխաների ուժեղ կողմերի վրա եւ փորձել նրանց մեջ զարգացնել բոլոր ոլորտները՝հասցնելով առավելագույն արդյունքի (շարժողական,խոսքի եւ հաղորդակցության,իմացական,սոցիալական,ինքնասպասարկման եւ այլ)։

2. Ուսումնական ծրագրի բաժիններ եւ անհրաժեշտ գրականություն։Կազմակերպում ենք ուսումնական ծրագրի բաժիններին համապատասխան ուսուցում (ֆիզկուլտուրա,մաթեմատիկա,խոսքի զարգացում,արվեստ,նկարչություն,երաժշտություն,ծեփ,ապլիկացիա,կառուցողական աշխատանք,էկոլոգիական դաստիարակություն)։

Օգտվում ենք անհրաժեշտ գրականությունից(ուսումնական ձեռնարկներ,մեթոդական ուղեցույցներ,գեղարվեստական գրականություն,դիդակտիկ պարագաներ,ուսումնաօժանդակ գրականություն եւ այլն),որպեսզի ապահովենք հնարավոինս որակյալ ուսուցում եւ դաստիարակություն։

3. Երեխայակենտրոն համագործակցային ուսուցում։Ստեղծում ենք երեխայակենտրոն միջավայր ՝ ուսումնախաղային բազմաբնույթ նյութերով հագեցված։Ուսումնասիրում ենք խմբի յուրաքանչյուր երեխայի զարգացման մակարդակը,սովորելու ոճը,խառնվածքը,անհատական հետաքրքրությունները՝քարտ-ցուցակների,զրույցների ու ծնողների տրամադրած տեղեկատվության միջոցով։

Կատարում ենք շարունակական դիտարկումներ եւ գնահատում,որպեսզի բարելավենք ուսումնական եւ դաստիարակության հետ կապված

աշխատանքնեևը։Այդ կերպ հնարավոր է իրականացնել թեմատիկ ինտեգրվածուսուցում։

Ինչո՞վ է արդարացվում թեմատիկ ինտեգրված ուսուցման ընտրությունը։Ուսուցման այս ձեւը միջանկյալ կապեր է հաստատում առարկաների եւ երեւույթների միջեւ,եւ հենց այդպիսի կառուցվածք ունի ինքը՝ կյանքը։Ուսումնական աշխատանքների ինտեգրումն օգնում է երեխաներին ՝ տվյալ թեմայի շուրջ ձեռք բերել հիմնական գիտելիքներ,կարողություններ եւ հմտություններ։Թեմայի ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր երեխա ակտիվորեն մասնակցում է սեփական ուսումնառության գործընթացին։Այդ պատճառով երեխաներից պահանջվում է կարգապահություն,համագործակցություն,նախաձեռնություն,հնարամտություն։

Ճիշտ կազմակերպված թեմատիկ ինտեգրված ուսուցման դեպքում երեխաները սովորում են սովորել ամբողջ կյանքի ընթացքում։

Թեմատիկ ինտեգրված ուսուցումը ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջեւ կապերի ստեղծումն է ՝ մեկ հետաքրքիր նյութի ուսումնասիրման միջոցով։

Մանկավարժը պետք ՝ հոգ տանի ,որպեսզի՝

1. Թեման համապատասխանի երեխաների հետաքրքրություններին։Այսինքն,դրա ուսումնասիրությունն ուղղված լինի նրանց հետաքրքրող հարցերի պատասխանների որոնմանը։-

2. Թեման նպաստի երեխաների երեւակայության եւ ստեղծագործական մտածողության խթանմանը։

3. Թեմայի ուսումնասիրումն անցկացվի այնպես,որ ապահովվի բազմամակարդակ մասնակցություն,եւ մ իաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքերը պսակվեն հաջողությանմբ։

4. Երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու եւ որոշակի պատասխանատվություն կրելու։

5. Երեխաները հնարավորություն ունենան ավելացնելու իրենց գիտելիքները եւ փորձը՝ առարկաների,մարդկանց եւ իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ։

Ինչպե՞ս ենք ընտրում թեմաները

1. Թեմաների ընտրությունը հուշում են չափորոշիչները,ուսումնական ծրագիրը,ընթացիկ տոնակատարությունները,անհրաժեշտ գրականությունը։Օրինակ՝ գրականության ցանկը նայելիս,կարդում ենք <<Մեղու>>,<<Բզեզ>>,<<Ճանճը>>,ստեղծագործությունների անունները որոնք պետք է սովորեցնենք։Ո՞ր թեմայի ուսումնասիրության ընթացքում կարող ենք դա անել։Իհարկե,էկոլոգիայի <<Միջատներ>> թեմայի ուսումնասիրության ընթացքում։

2. Թեմաները ընտրելիս նկատի ենք ունենում երեխաների կարիքները,խնդիրները եւ

հետաքրքրությունները։<<Ընտանիք>> թեմայի անցկացումը կարող է ջերմ հարաբերություններ ապահովել երեխաների,ընտանիքի անդամների եւ դաստիարակի միջեւ։<<Ընկերություն>> թեմայի անցկացումը երեխաների մոտ կարող է զարգացնել պատասխանատվություն,ընկերների նկատմամբ հարգանք,զիջողականություն,իրար օգնելու,լսելու հմտություններ։

Եթե մանկապարտեզի /նախակրթարանի կողքին շենք են կառուցում,մենք չենք կարող երեխաների ուշադրությունը շեղել եւ պատմել հեքիաթ ծաղիկների մասին։Երեխաներին կտանենք դուրս,կամ պատշգամբ,նրանք կտեսնեն կատարվող շինարարական աշխատանքները։Կարող ենք շինարարին հրավիրել զրույցի,շինարարական կենտրոնում կավելացնենք նոր նյութեր,ավտոմեքենաներ,տարբեր շենքերի նկարներ,կլսենք երեխաներին,թե ի՞նչ կցանկանային կառուցել,կառաջարկենք մեր օգնությունը,եթե կարիք ունենան։

3. Ընդգրկուն թեմաներ ընտրելիս ,օրինակ՝ հաց,ծով,մոլորակներ,տրանսպորտ,հագուստ,նկատի ենք ունենում ,որ այն կարող է տեւել 1-2 շաբաթ,կամ ավելի երկար ժամանակ։

Թեմատիկ ուսուցման արդյունքում երեխաների մեջ ձեւավորվում է .

Ինքնությունն մտածողություն

Քննադատական մտածողություն

Նախաձեռնություն

Անձնական մտածողություն

Համագործակցություն

Փոփոխությունների ճիշտ ընկալում

Զարգացման ոլորտների ու ուսումնական ծրագրի բաժինների գծապատկերն ըստ չափորոշչի



Ինտեգրված պարապմունքները՝որպես ուսուցման արդյունավետության միջոց

Նախադպրոցական մանկության շրջանում են ձեւավորվում անձնային կարեւորագույն այնպիսի հատկություններ,ինչպիսիք երեխային հնարավորություն են տալիս ինքնահաստատվելու հասրարակական կյանքում:

Զարգացման այս մեկնարկային շրջանի հաջողություններով է մեծապես պայմանավորված կյանքի հաջորդ փուլերի առաջընթացը:Ուստի կարեւորվում է նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժի դերը,որը կոչված է իրականացնելու մի շարք մասնագիտական գործառույթներ:Այդ գործառույթներից առանձնապես կարեւորվում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում:Դրանց շնորհիվ երեխաները ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ ու հմտություններ,որոնք չեն կարող յուրացնել ամենօրյա հաղորդակցման եւ ազատ գործունեության ընթացքում:Տարեցտարի կատարելագործվ ելով,ավանդականին փոխարինում են ժամանակակից ինտերակտիվ /փոխներգործուն/մեթոդները,որոնց կիրառումն ավելի արդյունավետ է դառնում հատկապես ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս:Ինչպես գիտենք ,մեր գիտակ ու խելացի երեխաներից շատերը երբեմն իրենց դրսեւորում են անհամարձակ ու պասիվ:Ինտեգրված պարապմունքների արդյունավետության ցուցանիշներից մեկն այն է,որ բոլոր երեխաներն այդ ժամանակ դառնում են գործուն,եւ յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխանող եւ իր համար նախընտրելի աշխատանքով:Այստեղ բացառվում է մի երեխայի գերակայությունը մյուսին:

Ինտեգրված պարապմունքի նմուշ-օրինակ

Հրաժեշտ աշնանը

ՆՊԱՏԱԿԸ

Կրթական. ամրապնդել երեխաների գիտելիքները աշնանային `կենդանի եւ անկենդան բնության վերաբերյալ:

Զարգացնող. զարգացնել երեխաների կապակցված խոսքը,մտածողությունը,մտքերն արտահայտելու կարողությունը,միջանձնային հարաբերությունները:

Ակտիվացնել ածականների կիրառումը խոսքում:

Հարստացնել բառապաշարը՝ *շագանակագույն,կանաչադեղնավուն,մառան,բույլ-բույլ,*բառերով:

Դաստիարակչական. դաստիարակել կոլեկտիվ աշխատանքի հմտություններ:

Արթնացնել սեր եւ հոգատար վերաբերմունք բնության հանդեպ:

Անհրաժեշտ պարագաներ. ձայներիզ՝Լ. Վ. Բեթհովենի <<Լուսնի սոնատ>>-ը,աշնանային բնապատկերներ,կենդանիների,թռչունների,միջատների նկարներ,բերքահավաքի տեսարան այգում,բանջարանոցում՝մեծ պաստառի վրա ,տարբեր մրջեր,բանջարեղեն,գույնզգույն տերեւներ:

Ընթացքը.

Լ. Վ. Բեթհովենի <<Լուսնի սոնատը>> -ի հնչյունների ներքո երեխաները լսում են դաստիարակի հաղորդումը աշնան վերաբերյալ:Այնուհետեւ զույգերով մտածում են կարծիքներ են հայտնում իրենց լսածի վերաբերյալ:Երեխաների քննարկումները լսելուց հետո դաստիարակը նրանց ուշադրութնունը հրավիրում է պատերին փայցված պաստառների վրա:

Դաստիարակ.

-Երեխաներ,օգտվելով պաստառներին փակցված նկարներից,եկեք պատմենք,թե աշնանն ինչ փոփոխություններ են կատարվում բնության մեջ,կենդանիները,թռչունները ու միջատները նախապատրաստվում են ձմռանը:Սկսենք եղանակից:Նկարագրեք,ինչօիսի՞ն է փոխվել եղանակը,երկինքը,արեւը. . .

Եերեխաներ

-Աշնանը եղանակը մի քանի անգամ է փոփոխվում օրվա ընթացքում. մեկ արեւ

է,մեկ՝մռայլ օր,մեկ տաք է,մեկ՝ցուրտ։Օդը սառն է։Ամպիկները <<լացկան>> են։Օրերը կարճացել են։Արեւը քիչ է տաքացնում։Լույսն ու ջերմությունը պակասել է։

Աշխուժացնող խաղ՝<<Անձրեւ>>

Դաստիարակի՝ <<Քամի>> հրահանգով երեխաները ձեռքի ափերն իրար շփելով հետ ու առաջ են տանում։<<Ամպրոպ>> բառը լսելիս ոտքեւնով դոփում են ,<<Անձրեւ>> -ի ժամանակ մատիկներով կտկտացնում են կատակին։

Դաստիարակ

-Աշնանը ի՞նչ փոփոխություններ են նկատվում ծառերի ու թփերի մոտ։

Երեխաներ

-Ծառերն իրենց հագուստը փոխում են եւ աշնանային հանդերձանք են հագնում,իսկ մայր հողը զուգվում է գույնզգույն տերեւներով։Եկել է այն ժամանակը,երբ հրաժեշտ ենք տալու քնքուշ ծաղիկներին։

Դաստիարակ

-Եկեք նկարագրենք աշնանային տերեւները։Ինչպիսի՞ն են նրանք։/Դաստիարակը ցուցադրում է խմբասենյակի մի անկյունում դրված գույնզգույն տերեւները/։

Երեխաներ

-Աշնանը ամեն մի տերեւ ներկվում է մի քանի գույնով՝կարմիր,դեղին,կանաչ,կանաչադեղնավուն,կարմարաշագանաագույն։

Սկսվում է տերեւաթափը։

Աշխուժացնող խաղ

Երեխաները զույգերով կանգնում են միմյանց դիմաց։Տղաները ստանձնում են քամու,իսկ աղջիկները՝տերեւների դերը։Դաստիարակի <<Քամի>> հրահանգի ժամանակ տղաները,,ուու ու ու ու. . . . >> ասելովարագ պտտվում են աղջիկների շուրջը,իսկ վերջիններս թեւերը թափահարելով կքանստում են ։

Դաստիարակ

-Երեխաներ,աշնան մասին մատ բանաստեղծություններ ու երգեր ոն հյուսված։Եկեք հիշենք դրանցից մի քանիսը։

Երեխաներն արտասանում են Հ. Հայրապետյանի <<Աշուն>>,<<Աշնան երգը>>,ոտանավորները եւ կատարում աշնան վերաբերյալ որեւէ երգ։

Դաստիարակ

—Աշունն իր հետ նաեւ աշխատանք է բերում։Ցուցադրելով պաստառի վրա <<Բերքահավաք>> նկարը,դիմում է երեխաներին։

—Պատմեք՝ինչպե՞ս են մարդիկ նախապատրաստվում ձմռանը։

Երեխաներ

-Աշնանը մարդիկ աշխատում են դաշտերում,այգիներում։Հավաքում են բերքն ու այն տեղավորում մառաններում՝ձմռանը օգտագործելու համար։

Դաստիարակ

-Աշնան թագավորությունում կրկին տոն էր։Աշուն Թագուհին իր պալատում պարահանդեսի է հրավիրում բոլոր մրգերին ու բանջարեղենի տեսակներին։

Անակնկալ։Ներս է մտնում Աշուն Թագուհին ՝մրգերով ու բանջարեղենով լի զամբյուղներով։Դաստիարակը ,ցուցադրելով մրգերն ու բանջարեղենը,հարցնում է.

-Ճանաչեցչ՞ք նրանց։Անվանեք եւ պատմեք նրանց մասին։Լսելով երեխաների վերլուծությունները՝դաստիար՛ակը մրգեր եև մանջարեղենի պատկերներով քար։տեր է տալիս եւ առաջարկում խաղալ։

Դիդակտիկ խաղ՝<<Այգում ,բանջարանոցում>>։

Երեխաները պետք է միրգ պատկերող քարտը փակցնեն այգի հիշեցնող պաստառի վրա,իսկ բանջարեղեն պատկերողը՝ բանջարանոցի։

Դաստիարակ

-Աշնանը ՝ինչպես մարդիկ,այնպես էլ կենդանիները,թռչունները ու միջատները պատրաստվում են ձմռանը։

Պաստառի վրա կոնդանիների նկարները ցուցադրելով դիմում է երեխաներին. <<Ի՞նր գիտեք անտառի բնակիչների մասին։Ինչպե՞ս են նրանք պատրաստվում ձմռանը>>։

Երեխաներ

-Նապաստակը,աղվեսը,սկյուռը փոխում են իրենց հանդերձանքը՝ավելի տաք ու փարթամ մուշտակներ են հագնում։Ոզնիները ծառի բների մեջ խոտ են լցնում,տաք տեղ պատրաստում քնելու համար։Անտառում արջը փոս է գտնում ,տեղավորում այնտես չոր տերեւների ճյուղեր եւ քնում ամբողջ ձմեռվա ընթացքում։

Դաստիարակ

-Պատմեք միջատների մասին։

Երեխաներ

-Միջատներն ապրում են ծառի կեղեւի տակ գտնվող անցքերի մեջ։Այդ տաք տնակներում նրանք քնում են ողջ ձմռանը։

Դաստիարակ

-Աշնանը որոշ թռչուններ թողնում են իրենց բները եւ հեռանում տաք երկրներ։Ի՞նչ գիտեք այդ մասին։

Երեխաներ

-Թռչունները երամ-երամչվում են տաք երկրներ,որովհետեւ հարավում կերը շատ է։Այստեղ նրանք կմրսեն,քաղցած կմնան։

Դաստիարակ

-Խոսեք ձմեռող թռչունների մասին։

Երեխաներ

-Ճնճղուկը,ագռավը,կաչաղակները ձմեռող թռչուններ են։Նրանք քիչ են երգում,տխրում են,սպասում ,թե ով մի բուռ կուտ կտա։Մենք պետք է կերակրասեղաններ պատրաստենք եւ կերակրենք նրանց ցորենի հատիկներով ու հացի փշրանքներով։

Աշխուժացնող խաղ՝<<Չցում է-ձմեռում է>>

Դաստիարակը երեխաներին տալիս է չվող եև ձմեռող թռչունների պատկերներով քարտեր։Երեխաները պետք է չվող թռչունների քարտերը փակցնեն կապույտ երկինք հիշեցնող պաստառի,իսկ ձմեռող թռչուններինը՝ծառերի վրա։

Պարապմունքն ավարտվում է դաստիարակի կողմից առաջադրված ամփոփիչ հարցերով.

-Ի՞նչ բերեց աշունն իր հետ։

-Ո՞րն է աշնան գույնը։

-Սիրու՞մ եք աշունը։

-Ինչպիսի՞ բառերով կնկարագրեք աշունը։

Այս պարապմունքին կարելի է նվիրել 2-3 օր։

Եզրակացություն

Այսպիսով, ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագուն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Ինտեգրման գործընթացի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է:

Տարեցտարի կատարելագործվ ելով,ավանդականին փոխարինում են ժամանակակից ինտերակտիվ /փոխներգործուն/մեթոդները,որոնց կիրառումն ավելի արդյունավետ է դառնում հատկապես ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս:Ինչպես գիտենք ,մեր գիտակ ու խելացի երեխաներից շատերը երբեմն իրենց դրսեւորում են անհամարձակ ու պասիվ:Ինտեգրված պարապմունքների արդյունավետության ցուցանիշներից մեկն այն է,որ բոլոր երեխաներն այդ ժամանակ դառնում են գործուն,եւ յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխանող եւ իր համար նախընտրելի աշխատանքով:Այստեղ բացառվում է մի երեխայի գերակայությունը մյուսին:

Ճիշտ կազմակերպված թեմատիկ ինտեգրված ուսուցման դեպքում երեխաները սովորում են սովորել ամբողջ կյանքի ընթացքում:

Թեմատիկ ինտեգրված ուսուցումը ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջեւ կապերի ստեղծումն է՝ մեկ հետաքրքիր նյութի ուսումնասիրման միջոցով:

Մանկավարժը պետք՝ հոգ տանի ,որպեսզի՝

1. Թեման համապատասխանի երեխաների հետաքրքրություններին:Այսինքն,դրա ուսումնասիրությունն ուղղված լինի նրանց հետաքրքրող հարցերի պատասխանների որոնմանը:

2. Թեման նպաստի երեխաների երեւակայության եւ ստեղծագործական մտածողության խթանմանը:

3. Թեմայի ուսումնասիրումն անցկացվի այնպես,որ ապահովվի բազմամակարդակ մասնակցություն,եւ մ իաժամանակ յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքերը պսակվեն հաջողությանմբ:

4. Երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու եւ որոշակի պատասխանատվություն կրելու:

5. Երեխաները հնարավորություն ունենան ավելացնելու իրենց գիտելիքները եւ փորձը՝ առարկաների,մարդկանց եւ իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նախաշավիղ 8. 2012

2. Նախաշավից 6. 2013

3. Նախաշավիղ 5. 2013

4. Մանկապարտեզի ավագ խմբի /5-6տարեկանների/կրթական համալիր ծրագիր,Երեւան ,2007թ.

5. Համացանց-վիկիպեդիա. քոմ